



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ №- 13Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի երրորդ մասի 14-րդ կետը և ղեկավարվելով 64-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

«ՀՀ դատական ղեկարտամենտ» ՊԿՀ-ի կենտրոնական մարմնի և առանձնացված ստորաբաժանումների բնականոն աշխատանքն ապահովելու նպատակով՝ ՀՀ դատարանների պահուստային ֆոնդից «ՀՀ դատական ղեկարտամենտ» ՊԿՀ-ի կենտրոնական մարմնին հատկացնել 1390.0 հազ. դրամ, որից՝

❖ «424100 Մասնագիտական ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով՝ հատկացնել 1040.0 հազ. դրամ՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի և ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Աշտարակ քաղաքի նստավայրի վարչական շենքերի գազի կարգավորիչների փոխարինման նպատակով (յուրաքանչյուր վարչական շենքի գազի կարգավորիչների փոխարինման համար նախատեսելով 520.0 հազ. դրամ):

❖ «425200 Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական դասակարգման հոդվածով՝ 350.0 հազ. դրամ «ՀՀ դատական ղեկարտամենտ» ՊԿՀ-ի առանձնացված ստորաբաժանում հանդիսացող ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմում հաշվառված «Նիսան “PATHFINDER”» մակնիշի «005 ss 01» պետհամարանիշի ծառայողական ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով:

**Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ**

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ